ԱՍՏ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 1

ք. Երևան '01' դեկտեմբերի 2015 թ.

<<ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն>>, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Օրանժ Արմենիան, ի դեմս Ընկերության տնօրեն Ալեքսանդր Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմա-նագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Սույն Պայմանագրի հավելված N 1-ով սահմանված ֆիքսված հեռախոսակապի ծառայության վճարը համարվում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Պատվիրատուից՝ անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայություններից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ

որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարող

Օրանժ Արմենիա ՓԲԸ Գլխավոր տնօրեն, Ալեքսանդր Եսայան

հարկ վճարողի հաշվառման համարը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 0 | 0 | 9 | 5 | 8 | 9 | 9 |

հ/հ 16048054907108

էլ. փոստի հասցե՝ orangearmenia@orangearmenia.am

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ

Ծառայության աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյան,

հարկ վճարողի հաշվառման համարը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 2 | 5 | 0 | 5 | 5 | 1 | 1 |

հ/հ 900011556355

հաշվի առաքման հասցե ք. Երևան, Նալբանդյան 13

առձեռն , բաժանորդների սպասարկման կետում էլ. փոստի հասցեն՝ admin@sif.am

կոնտակտային հեռախոս 7410592363

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությամբ չհակասող դրույթներ:*

Հավելված 1
<<01>> դեկտեմբեր 2015թ. կնքված
N___________________ ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ֆիքսված քաղաքային հեռախոսագծերի (ներքին ԱՏՍ) ծառայությունների տրամադրման համար

| | Տեխնիկական բնութագրի տարրերը | Նկարագրություն | Չափման Միավոր | Քանակ /ծավալ | Բաժանորդային վարձ ներառյալ ԱԱՀ | Տարեկան գումար ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տվյալների փոխանցման ցանցի արագություն | ՅՄԲ ներբեռնման և ՅՄԲ վերբեռնման հնարավորություն: | կետ | 2 կետ | 20 000 | 480 000 |
| 2 | Վիրտուալ համարների տրամադրում | Առնվազն 99 վիրտուալ համարների տրամադրում | հատ | 99 | 2000 | 2376000 |
| 4 | VOIP ցանցի տրամադրում | VOIP (SIP) | հատ | 1 | - | - |
| 5 | ԱՏՍ-ի ծառայություններ | • Կարճ համարանիշներ<br>• Բազմագծային մուտքային և ելքային զանգերի հնարավորություն<br>• Գոյություն ունեցող Ֆիքսված և բջջային ցանցի հեռախոսակապի անվճար րոպեներ | հատ | 3 | - | - |
| Ծառայության մատուցման ժամկետը | | | | | | |
| | Սկիզբը 01.12.15թ | | Ավարտը՝ անժամկետ | | | |

Կատարող

Օրանժ Արմենիա ՓԲԸ Գլխավոր տնօրեն, Ալեքսանդր Եսայան
հարկ վճարողի հաշվառման համարը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 0 | 0 | 9 | 5 | 8 | 9 | 9 |

հ/հ 1604805409710８
էլ. փոստի հասցեն՝ orangearmenia@orangearmenia.am

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱՀՆ ՍԱՊԾ

Ծառայության աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյան,

հարկ վճարողի հաշվառման համարը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 2 | 5 | 0 | 5 | 5 | 1 | 1 |

հ/հ 900011556355

հաշվի առաքման հասցե ք. Երևան, Նալբանդյան 13

առձեռն , բաժանորդների սպասարկման կետում էլ. փոստի հասցեն՝ admin@sif.am

կոնտակտային հեռախոս 7410582363

---------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ. Լուսավորիչ 9,
Երևան 0015, ՀՀ
Վեբ կայք՝ www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ
հեռախոսահամարներից
Էլ. փոստ՝ 444@ucom.am

Հարգելի բաժանորդ,

Սույն նամակով հայտնում ենք, որ 2017թ-ի փետրվարի 1-ից «Յուքոմ» ՍՊ ընկերության ֆիքսված և շարժական կապի ծառայությունների դիմաց վճարումները հարկավոր է փոխանցել միայն ներքոնշյալ հաշվեհամարին:

**Վճարումների ճիշտ գրանցումն ապահովելու և ծառայությունների կասեցումից խուսափելու համար խնդրում ենք հետևել վճարումների կատարման կարգին:**

***Ֆիքսված կապի ծառայություններ***

*Վճարումը ստացող բանկ*՝
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

*Նպատակ դաշտում պարտադիր նշվող տեղեկություն*՝
Յուքոմ բաժանորդագրման դիմումի (ID) համար idXXXXXXid ձևաչափով:
Ֆիքսված կապի Յուքոմ բաժանորդագրման դիմումի (ID) համարը կարող եք գտնել հարկային հաշվի լրացուցիչ տվյալներ հատվածում:

Շարժական կապի ծառայություններ

*Վճարումը ստացող բանկ*՝
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

*Նպատակ դաշտում պարտադիր նշվող տեղեկություն*՝
Ucom հաշիվը acXXXXXXac ձևաչափով:
Շարժական կապի Յուքոմ հաշվի համարը կարող եք գտնել բիլինգային հաշվի տվյալներ հատվածում:
**Յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի դիմաց պետք է կատարվի առանձին փոխանցում:**

Հարգանքով՝
Հաճախորդների սպասարկման բաժին

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom բջջային հեռախոսահամարից
+374 11 444 444՝ այլ հեռախոսահամարներից
Էլ. փոստ՝ 444@ucom.am
www.ucom.am

«Յուքոմ» ՍՊԸ
Սայաթ-Նովա 40/1,
Երևան 0025, ՀՀ
Հեռ` +374 (11) 400 400
Ֆաքս` +374 (11) 400 401
Էլ.Փոստ` info@ucom.am
Վեբ կայք` www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova,
Yerevan 0025, RA
Tel: +374 (11) 400 400
Fax: +374 (11) 400 401
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ
պետական կառավարչական հիմնարկի պետ
Պարոն Արմեն Աբրահամյան

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ԵԼՔ N 2922
«02» 05 2016թ.

Հարգելի պարոն Աբրահամյանին,

Ցանկանում ենք տեղեկացնել, որ «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (Օրանժ) դադարեցրել է իր գործունեությունը` միանալով «Յուքոմ» (Յուքոմ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որին փոխանցման ակտին համապատասխան` անցել են Օրանժի իրավունքներն ու պարտականությունները: Միացման ձևով վերակազմակերպումը 2016 թվականի մարտի 31-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (տեղեկանքի պատճենը և Յուքոմի ռեկվիզիտները կցվում են):

Հաշվի առնելով վերոգրյալը` անհրաժեշտության դեպքում խնդրում ենք համապատասխան փոփոխություններ կատարել` Օրանժի փոխարեն այսուհետ օգտագործելով Յուքոմ անվանումը: Հայտնում ենք նաև, որ վճարման մեխանիզմը չի փոփոխվել:

Միևնույն ժամանակ հայտնում ենք մեր պատրաստակամությունը` տրամադրելու համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև ցուցաբերել տեխնիկական աջակցություն` նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

Առդիր` 2 էջ

Հարգանքով,

Հայկ Եսայան
Գլխավոր Տնօրեն

Կատարող`
Մարգարիտա Կոծանյան
095987077

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
13.04.2011թ. թիվ 49-Ն հրամանով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

## ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավաբանական անձի (անձանց) միացման մասին

| | |
|---|---|
| Անվանումը | «ՅՈՒՔՈՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| Գրանցող մարմնի անվանումը | ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստր |
| Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 19.04.1996թ. |
| Գրանցման և վկայականի համարները | 264.110.02498 01Ա 024319 |
| Գտնվելու վայրը | 0009, ՀՀ ք. Երևան, Տերյան փող., 19 շ. 4 բն. |
| Միացման հիմքերը (որոշում, հրաման) | 21.12.2015թ. թիվ 1/12 որոշում |

Միացող իրավաբանական անձը (անձինք)

| գրանցման համարը | անվանումը |
|---|---|
| 1. 264.120.08427 | «ՕՐԱՆԺ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն |

Միացող վերոհիշյալ իրավաբանական անձանց գործունեությունը դադարեցված է և պետական ռեգիստրում իրավաբանական անձինք պետական գրանցումից հանված են 31.03.2016թ.

Պետական ռեգիստր

______________
ստորագրություն

« 31 » 03 2016 թ.

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ.Լուսավորիչ 9
Երևան 0015 ՀՀ
Հեռ. +374 (11) 400 400
Ֆաքս +374 (11) 400 401
Էլ Փոստ` info@ucom.am
Վեբ կայք` www.ucom.am

"UCOM" LLC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich
Yerevan 0015, RA
Tel. +374 (11) 400 400
Fax +374 (11) 400 401
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

«Յուքոմ» ՍՊԸ

Իրավ. հասցե` ք. Երևան, Տերյան 19, բն.4

Գործ. հասցե` Գ.Լուսավորիչ 9, Երևան 0015, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն

Պետական գրանցման համար` 01Ա 024319

ՀՎՀՀ` 00024873

Հեռ.` +374 (11) 400 400

Ֆաքս` +374 (11) 400 401

Բանկ` "ՎՏԲ – Հայաստան Բանկ" ՓԲԸ

Հաշվի համար` 16048054007108

Ստացող` Յուքոմ ՍՊԸ

Գլխավոր Տնօրեն` Հայկ Եսայան

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

"UCOM" LLC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
www.ucom.am

For further questions, please call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
THE FASTEST MOBILE INTERNET IN ARMENIA

**Բաժանորդային Պայմանագիր No /Subscription Agreement No 3204129**

# Դիմում
# Հետվճարային հեռախոսակապի ծառայություններին հետվճարային ամսական բաժանորդագրության Application
# Postpaid Monthly Subscription to Telephony Services

☐ **Ֆիզիկական անձ /Individual**
☑ **Իրավաբանական անձ /Legal entity**
☑ **Իրավաբանական անձ /Legal entity**
☐ **Անհատ ձեռնարկատեր /Private entrepreneur**

Կազմակերպության /Company Name: Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ
Կազմակերպաիրավական ձևը/Juridical form:
Պետ. գրանցման տվյալներ/ State Registration Data: 01Բ002246
ՀՎՀՀ /Tax code: 02505511
Հեռ. / Phone.:
Հասցե/Address: Միքայել Նալբանդյան 13 շենք, Երևան, ՀՀ

**Ընկերության Տնօրեն / Company Director**
Անուն,ազգանուն/Name, surname: Մինաս Մինասյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: AK 0514465 31/05/2010 005
Հեռ. / Phone.:

**Ընկերության լիազորված անձ /Company Representative**
Անուն,ազգանուն/Name, surname: Մինաս Մինասյան
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ/ ID details: AK 0514465 31/05/2010 005

**Հաշվի առաքման եղանակ /Invoice delivery**
☑ էլ. Փոստ/e-mail: soghomon.matevosyan@ssa.am

**Ծառայության տեսակը /Subscription type:**
Հետվճարային բաժանորդագրություն
/Postpaid subscription

Սույն դիմումը, առկայության դեպքում դրա հավելվածների, Յուքոմ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Յուքոմ) պաշտոնական կայքում հրապարակված «Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ի, առանձին Ծառայություններին վերաբերող հատուկ դրույթներ և պայմանների, Ծառայությունների գնացուցակի, Սակագնային պլանի, Ծառայության առաջարկի նկարագրի, ինչպես նաև յուրաքանչյուր Ծառայությունից օգտվելու վերաբերյալ՝ Յուքոմի կողմից սահմանված կիրառելի կանոնների, կարգերի հետ միասին հանդիսանում են Ձեր և Յուքոմի միջև կնքված պարտադիր ուժ ունեցող Բաժանորդային Պայմանագիր: Ստորագրելով սույն դիմումը՝ Բաժանորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է Բաժանորդային Պայմանագրին, որի հետ լիովին համաձայն է, և տալիս է համաձայնություն իր կողմից Յուքոմի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և դրանց կատարման մասին տեղեկություններ, այդ թվում՝ վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների մասին տեղեկություններ տրամադրել ՀՀ-ում գործող վարկային բյուրոներին՝ օրենքով սահմանված նպատակով օգտագործման համար: *Բաժանորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը կցված է սույն դիմումին՝ որպես Հավելված (այսուհետ՝ ԱՀՓ հավելված): Սույն դիմումում և ԱՀՓ հավելվածում պարունակվող տվյալների միջև տարբերության դեպքում գերակայում է ԱՀՓ հավելվածը, որի հիման վրա Յուքոմն իրավասու է կատարել սույն դիմումում պարունակվող տվյալների համապատասխան փոփոխություններ և ճշգրտումներ: /This application, together with its appendices, if any, "General Terms and Conditions for Provision of Electronic Communications and Other Related Services", posted on the official website of Ucom LLC

**Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն**
**/Subscriber`s/Authorized person`s signature:** √ / [signature]

**Յուքոմ ՍՊԸ /Ucom LLC**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist: Hakob Vardanyan FAM
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address
Ամսաթիվ /Date 13/05/2019

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
ՀՀ, Երևան 0015, Գ. Լուսավորիչ 9
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
էլ. փոստ՝ 444@ucom.am

"UCOM" LLC
"Yerevan Plaza" business center
9 G. Lusavorich, Yerevan 0015, RA
www.ucom.am

For further questions, please call
444 from Ucom numbers
+374 (11) 444 444 from other numbers
E-mail: 444@ucom.am

SPEEDTEST AWARDS 2017
THE FASTEST MOBILE INTERNET IN ARMENIA

(hereinafter "Ucom"), specific terms and conditions concerning separate Services, Service Pricelist, Tariff Plan, description of Service offer, as well as applicable rules and procedures concerning the use of each Service established by Ucom, shall constitute a binding Subscription Agreement between You and Ucom. By signing this application, the Subscriber confirms that he/she has fully read and agrees to the Subscription Agreement and gives his/her consent to provision of information regarding his/her obligations towards Ucom and the fulfillment thereof (including information about payments, debts, payment habits) to credit bureaus operating in the RA, to be used for the purposes stipulated by law.*The copy of subscriber`s ID document is attached hereto as an Appendix (hereinafter the "IDD appendix"). In case of inconsistencies between the data contained in this application and IDD appendix, the IDD appendix shall prevail, based on which Ucom shall have the right to correspondingly modify and correct the data contained in this application.

**Բաժանորդի/Լիազորված անձի ստորագրություն /Subscriber`s/Authorized person`s signature:**

Hakob Vardanyan FAM

**Յուքոմ ՍՊԸ /Ucom LLC**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝ /Sales and Service Specialist
Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝ /Ucom Service Center address
Ամսաթիվ /Date 13/05/2019

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ.Լուսավորիչ 9,
Երևան 0015, ՀՀ
Վեբ կայք՝ www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ
հեռախոսահամարներից
Էլ.Փոստ՝ 444@ucom.am

**Բաժանորդային Պայմանագիր No 3204129**

**Հավելված 1**

Ընկերության անվանում Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ
Սակագնային պլան Բիզնես 4
Գումարային սահմանաչափ 1000000 ՀՀԴ

Բաժանորդը հաստատում է, որ ծանոթացել է ներքոնշյալ Սակագնային տարբերակ(ներ)ի պայմաններին:

| No | Հեռախոսա համար | SIM քարտի համար | Սակագնային տարբերակ | ԲՓԽ | Կորպորատիվ ծառայությունների փաթեթ | Գունավոր համար |
|---|---|---|---|---|---|---|
| 86 | 60654046 | 89374101306062611456 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 0A /Services set 0A | Ստանդարտ /Standard |
| 87 | 60654047 | 89374101306062611464 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 88 | 60654058 | 89374101306062611571 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 89 | 60654048 | 89374101306062611472 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 90 | 60654057 | 89374101306062611563 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 91 | 60654049 | 89374101306062611480 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 92 | 60654056 | 89374101306062611555 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 93 | 60654055 | 89374101306062611548 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 94 | 60654054 | 89374101306062611530 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 95 | 60654053 | 89374101306062611522 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 96 | 60654052 | 89374101306062611514 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 97 | 60654051 | 89374101306062611506 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 7 /Services set 7 | Ստանդարտ /Standard |
| 98 | 95678772 | 89374101901003778966 | Տարբերակ 8 | A | Ծառ.փաթեթ 0A /Services set 0A | Ստանդարտ /Standard |

**Յուքոմ ՍՊԸ**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝

Անուն, ազգանուն, ստորագրություն

Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝

**Բաժանորդ՝**
Մինաս Մինասյան

Անուն, ազգանուն, ստորագրություն

Ամսաթիվ 13/05/2019

«Յուքոմ» ՍՊԸ
«Երևան Պլազա» բիզնես կենտրոն
Գ.Լուսավորիչ 9,
Երևան 0015, ՀՀ
Վեբ կայք՝ www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից
+374 (11) 444 444՝ այլ
հեռախոսահամարներից
էլ.Փոստ՝ 444@ucom.am

**Բաժանորդային Պայմանագիր No 3204129**

## Կորպորատիվ Ծառայությունների փաթեթ

Բաժանորդն իրավասու է հիմնական հաշվի ներքո ակտիվացված յուրաքանչյուր հեռախոսագծի համար սահմանել Յուքոմի ծառայությունների փաթեթ (կորպորատիվ ծառայությունների փաթեթ): Կորպորատիվ ծառայությունների փաթեթները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր հեռախոսագծի համար որոշել կորպորատիվ հաշվից վճարվող զանգերի սահմանաչափը և այն ծառայությունները, որոնք հասանելի կլինեն կորպորատիվ ենթահաշվից: Հեռախոսագիծ օգտագործողը կարող է օգտվել Յուքոմի մնացած ծառայություններից՝ վերալիցքավորելով անհատական ենթահաշիվը:

Ստորև բերված աղյուսակի ձախ սյունակում նշված են ծառայությունները, իսկ վերին տողում՝ կորպորատիվ ծառայությունների փաթեթները: Եթե ծառայության դիմաց՝ համապատասխան կորպորատիվ ծառայությունների փաթեթի սյունակում դրված է «x» նշանը, ապա համապատասխան ծառայության համար վճարը գանձվում է Բաժանորդի կորպորատիվ հաշվից: «x» նշանի բացակայության դեպքում ծառայության համար վճարը գանձվում է անհատական ենթահաշվից:

| Ծառայություններ, որոնց գումարը գանձվում է կորպորատիվ հաշվից | 0A* | 0B | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բաժանորդների փակ խումբ | | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| Ucom ցանցում ձայնային /տեսա-զանգեր | | | | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| Զանգեր դեպի ֆիքսված համարներ | | | | | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| Այլ բջջային ցանցերի ձայնային/տեսազանգեր | | | | | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| Կարճ հաղորդագրություն | | | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| MMS | | | | | | | | | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| GPRS | | | | | | | | | | | | X | | X | X | X | X | X |
| Միջազգային զանգեր | | | | | | | | X | | X | | | X | | X | X | X | X |
| Ռոմինգ ծառայություն (ձայնային/GPRS/կարճ հաղորդակցություն/MMS) | | | | | | | X | | | | X | | X | X | | | X | X |
| Պրեմիում ՍՄՏ | | | | | | | | | | | | | | | | X | | X |
| Ձայնային փոստարկղ | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| Անսավճար/ներառյալ ԲՓԽ | | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X | X |

*Եթե կորպորատիվ հաշվի ներքո ակտիվացված ենթահաշիվ օգտագործողը, որն օգտվում է OA Ծառայությունների փաթեթից, 2 (երկու) անընդմեջ ամսվա ընթացքում չի կատարում ելքային զանգեր, Յուքոմն իրեն իրավունք է վերապահում կասեցնել օգտագործողի հեռախոսագիծը: Հեռախոսագծի կասեցումից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում ենթահաշիվ օգտագործողի կողմից անձնական հաշիվը վերալիցքավորելու և ելքային զանգ կատարելու միջոցով հեռախոսագիծը չվերաակտիվացնելու դեպքում այն կարող է դադարեցվել:
** Ֆիքսված համարները կարող են օգտվել միայն կորպորատիվ ծառայությունների փաթեթ 1-ից և 6-ից:

**Յուքոմ ՍՊԸ**
Վաճառքի և սպասարկման մասնագետ՝

անուն, ազգանուն, ստորագրություն

**Բաժանորդ՝**
Մինաս Մինասյան

անուն, ազգանուն, ստորագրություն

Յուքոմ սպասարկման կենտրոնի հասցե՝

Ամսաթիվ 13/05/2019